ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

СЕЛЬСКАЯ ОБШИНА
СЕЛА ПШАТАВАН
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

N 108
<< 18>> 12. 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Փշատավան համայնքի ավագանու 16.12.2014 թվականի թիվ 11 արձանագրության որոշումները:

Առդիր ---11----- թերթ

Համայնքի ղեկավար *Ռ. Ստեփանյան*

22 ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112.40/14728-14
«18» 12 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<16>> *դեկտեմբերի* **2014***թ.* **N 39**

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավանի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 16-ի N 11 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
Ե. Պողոսյան			
Ս. Մալխասյան			
Ա. Սարգսյան			
Ս. Խաչատրյան			
Ա. Ստեփանյան			
Ս. Սլոյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Ստեփանյան

2014 թվականի դեկտեմբերի <16 >>

գ. Փշատավան

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ <<16>>-Ի
N 39 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ռ. ՍՏԵՓԱՆՅԱՆՅԱՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ;

2.ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ;

3. ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

4. ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱՖԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ;

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» դեկտեմբերի 2014 թվականի N 40-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասինՀայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ե Ց՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան գյուղական համայնքի վարչական տարածքում 2015թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ե. Պողոսյան

Ս. Մալխասյան

Ա. Սարգսյան

Ս. Խաչատրյան

Ա. Ստեփանյան

Ս. Սլոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ռ.Ստեփանյան*

2014 թվականի դեկտեմբերի **<16 >>**

գ. Փշատավան

2014 թվականի դեկտեմբերի 16
գ.Փշատավան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի
ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ N 40-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան՝նորշենքերի,շինությունների (ներառյալ ոչ հիմնական)շինարարության (տեղադրման)թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝երեք հազար դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝երեք հազար դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հազար դրամ.

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝յոթ հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝հինգ հարյուր դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերեկանգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվոոություն չպահանջվող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախածով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման,ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,բացի սույ ն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության

համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝երեք հազար դրամ:
2/ ծխախոտի արտադրաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝երեք հազար դրամ:
5. Համայնքի տարածքում՝
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ.
բ/ հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:
7. Համայնքի տարածքում՝առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24ᵒᵒ -ից հետո աշխատելու թույլտվության համար՝տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.
գ/ բաղնիքների(սաունաների) համար՝երկու հարյուր հազար դրամ.
դ/ խաղատների կազմակերպման համար՝հինգ հարյուր հազար դրամ.
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝երկու հարյուր հիսուն հազար դրամ.
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝մեկ հարյուր հազար դրամ.
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ գրո դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ տասը հազար դրամ:
10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
11. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:
12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<16>> ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ. N 41-Ն

ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ԻՆ մասի երրորդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արմավիրի մարզի Փշատավան գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի և 2-ի::
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
Ե. Պողոսյան			
Ս. Մալխասյան			
Ա. Սարգսյան			
Ս. Խաչատրյան			
Ա. Ստեփանյան			
Ս. Սլոան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Ստեփանյան

2014 թվականի դեկտեմբերի <<16>>

գ. Փշատավան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ Ի<<16>>-Ի
N41-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՇԱԽՍԵՐ

Եկամուտներ

1.Հողի հարկ 5141.0 հազար դրամ
2. Գույքահարկ 2010.0 հազար դրամ
3.Տեղական տուրք 50.0 հազար դրամ
4 ոչ հարկային եկամուտներ 800.0 հազար դրամ
5. պահուստային հողի հարկ 150.0 հազար դրամ
6.մուտքեր պետ բյուջեից 41111.2 հազար դրամ
Ընդամենը՝ 49262.2 հազար դրամ

Շախսեր

1. Գյուղապետարան՝ 18127.5 հազար դրամ
2. Հանգիստ, մշակույթ և սպորտ 7843.5 հազար դրամ
3. Համայնքային այլ ծառայություն 4143.0 հազար դրամ
4. Աղբահանություն 2422.0 հազար դրամ
5. Սոց. օգնություն 3350.0 հազար դրամ
6. Ճանապարհների ընթացիկ նորոգում՝ 1100.0 հազար դրամ
7. Պահուստային ֆոնդ 5144.7 հազար դրամ
8. խմելու ջուր՝ 5611.5 հազար դրամ
9. Միջն.ընդ.կրթություն 1520.0 հազար դրամ

Ընդամենը՝ 49262.2 հազար դրամ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզի Փշատավան գյուղական
Համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 41-Ն որոշման

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը
1.	Համայնքի ղեկավար	1	240000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	137500
	Աշխատակազմ		
3.	Աշխատակազմի քարտուղար /ծածկ.1.2-1/	1	152000
4.	Գլխավոր մասնագետ /ծածկ. 2.3-1/	1	145000
5.	Առաջատար մասնագետ /ծածկ. 3.1-1/	3	111000
6.	Առաջատար մասնագետ /ծածկ. 3.1-2/		
7.	Առաջատար մասնագետ /ծածկ. 3.1-3/		
8.	Երկրորդ կարգի մասնագետ/ծածկ. 3.3-1/	1	99500
	Տեխնիկական սպասարկման անձնակազմ		
9.	Խմելու ջրի պոմպերի էլեկտրիկ	1	85500
10	Պարտիզպան	1	111000
11	Գրադարանավար	1	79524
12	Հավաքարար	1	79524
	Մշակույթի տուն		
13	Սպորտ կազմակերպիչ	1	99500
14	Պահակ	1	80829

Փշատավան համայնքի ղեկավար Ռ. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<16>>ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ. N 42

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փշատավան համայնքի անապահով բնակիչներին ցուցաբերել 180 000/հարյուր ութսուն հազար/ դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Ե. Պողոսյան			
Ս. Մալխասյան			
Ա. Սարգսյան			
Ս. Խաչատրյան			
Ա. Ստեփանյան			
Ս. Սլոյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Ստեփանյան

2014 թվականի դեկտեմբերի <<16>>

գ. Փշատավան

Հավելված
Արմավիրի մարզի Փշատավան համայնքի
ավագանու 16.12.2014 թվականի թիվ 42 որոշման

ՑՈՒՑԱԿ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

հ/հ	Անուն, ազգանուն	Գումարը/դրամ/
1	Արթուր Ստեփանյան	20000/քսան հազար/
2	Քնքուշ Խաչատրյան	30000/երեսուն հազար/
3	Անդրանիկ Հովհաննիսյան	20000/քսան հազար/
4	Հարություն Մալխասյան	20000/քսան հազար/
5	Գոհար Աբրահամյան	50000/հիսունհազար/
6	Տիգրան Տիգրանյան	20000/քսան հազար/
7	Հայաստան Առաքելյան	20000/քսան հազար/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓՇԱՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<16>>ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ. N 43

ՓՇԱՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱՖԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Աշխատանքային օրենսգրքի >> 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով , հիմք ընդունելով նրա բարեխիղճ աշխատանքը և Փշատավան համայնքի ավագանու առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Փշատավան համայնքի ղեկավար Ռաֆիկ Ստեփանյանին իր կատարած բարեխիղճ աշխատանքի համար տրամադրել մեկ ամսվա աշխատավարձի չափով միանվագ դրամական պարգևատրում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
Ե. Պողոսյան			
Ս. Մալխասյան			
Ա. Սարգսյան			
Ս. Խաչատրյան			
Ա. Ստեփանյան			
Ս. Սլոյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ռ.Ստեփանյան*

2014 թվականի դեկտեմբերի <<16>>

գ. Փշատավան